Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025 թվականի փետրվարի 18-ին, ժամը 15:00-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմ համայնքային կառավարչական հիմնարկ»-ում՝ Ալավերդու համայնքապետարանի վարչական շենքում (հասցե՝ ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկ փողոց, 8/1, 4-րդ հարկ, նիստերի դահլիճ) տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի բաց մրցույթ՝ 1 լոտով:

Բաց մրցույթով կառուցապատման իրավունքով տրամադրվում է՝

Լոտ 1. Համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 1-ին փողոց, 30/1 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-088-0982-0003 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության 0.00264 հեկտար մակերեսով հողամասը, 10 /տասը/ տարի ժամկետով, կառուցապատման նպատակով, 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ տարեկան մեկնարկային վճարով:

Կառուցապատման իրավունքի մրցույթի մասնակցության վճարը սահմանված է 15000 դրամ, նախավճարը և քայլի չափը՝ մեկնարկային գնի 5 տոկոսի չափով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում մրցութային հանձնաժողովի կողմից լավագույն պայմաններ առաջարկած մասնակիցը:

Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում:

Հողամասն ունի մոտեցում ընդհանուր օգտագործման ճանապարհից:

Հողամասի տարածքը հարթ է, նախատեսված է կառուցելու մեկ հարկանի կառույց 1 տարվա ընթացքում, կառուցապատման տոկոսը՝ 90:

Հայտերի ընդունման վերջնաժամկետն է՝ 2025 թվականի փետրվարի 13-ը, ժամը՝ 17:00:

Հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայանալ Ալավերդու համայնքապետարան՝ անձը հաստատող փաստաթղթով և մասնակցության համար վճարի անդորրագրով:

Լրացուցիչ տեղեկությունների և այլ պայմանների համար դիմել Ալավերդու համայնքապետարան, հեռ.՝ /0253/2-41-00, էլեկտրոնային փոստ՝ alaverdimunicipality@gmail.com:

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ